# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

ՀԵՆՐԻ-ՇԻՆ ՍՊԸ-ն ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/79 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի |
|---|---|
| | տեխնիկական բնութագիրը |
| 8 | Մարմնամարզական նստարան – Մարմնամարզության նստարանը հավաքովի գույք է, որը բաղկացած է նստելատեղից, տակամասի մետաղական ոտքերից և հենակից: Նստելատեղը և տակամասը պատրաստված են հատուկ մշակում անցած սոճու կամ խեժափիճինի կամ փշատերև այլ ծառերի փայտից, պարագծի շուրջը և նստարանի անկյունները կլորացված են: Մարմանամարզական նստարանի մակերեսը խնամքով հղկված է բարձրորակ խոնավակայուն և չսահող երկու շերտով պատված բարձրորակ երեք բաղադրիչ անգույն լաքով: Նստելատեղի չափերն են՝ 3000մմ երկարություն, 300 մմ լայնություն և 40մմ հաստություն: Տակամասի չափերն են՝ 2600մմ երկարություն, 100 մմ լայնություն և 37-40 մմ հաստություն: Նստարանի մետաղական ոտքերը պետք է հնարավորություն տան ունենալ 300 մմ բարձրություն, ունենան փակ շղթայանման կառուցվածք, ոտքերի բարձրությունը մեխանիկական եղանակով կարգավորելու հնարավորությամբ: Նստարանի մետաղական ոտքերը և հենակը պատրաստված են 30x30x2,0 մմ մետաղական քառակուսի խողովակից, միացումները՝ զոդման եղանակով, զոդման կարանները հղկված են,փոշեներկված բարձրակարգ մուգ մոխրագույն □անտրացիտ□ ներկանյութով: Մետաղական կառուցվածքը միացվում է միջանցիկ հեղյուսե մանեկային ամրացումով: Նստստեղի կողմից հեղյուսը ողորկ է, իսկ եզրերը՝ նստատեղի հարթության վրա: Մինչ մատակարարումը՝ ապրանքի նմուշը նախապես համաձայնեցնել Պատվիրատուի հետ:Երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ եկած թերությունները Գնորդի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում պետք է շտկել տեղում /դետալների փոխարինում/ կամ փոխարինել նորով: Չափաբաժնում նշված ապրանքների չափսերի մեջ հնարավոր թույլատրելի շեղումը ±3%: Եթե ապրանքը |

| | |
|---|---|
| | արտադրվում է ՀՀ-ում, ապա Պայմանագրի կատարման փուլում չափաբաժնով ձեռքբերվող ապրանքների պատրաստման ընթացքում օգտագործվող հիմնական նյութերի համար պարտադիր է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի առկայությունը: Եթե ապրանքը ներմուծվում է արտերկրից, ապա Պայմանագրի կատարման փուլում չափաբաժնով ձեռքբերվող ապրանքների համար պարտադիր է ապրանքն արտադրողից կամ վերջինիս ներկայացուցչից երաշխիքային նամակի կամ համապատասխանության սերտիֆիկատի առկայությունը: Ապրանքները պետք է լինեն նոր` չօգտագործված: Մատակարարումը ըստ ուսումնական հաստատությունների /պատվիրատուի կողմից տրամադրված բաշխման ցանկին համապատասխան/ պետք է իրականացնի Մատակարարն իր միջոցների հաշվին: Երաշխիքային ժամկետը սահմանվում է 365 օր` հաշված Գնորդի կողմից ապրանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից: Մատակարարված ապրանքները պետք է Մատակարարն իր միջոցների հաշվին մոնտաժի` տեղադրի մատակարարման վայրում համաձայնեցնելով պատվիրատուի հետ /ըստ անհրաժեշտության/: Մինչև մատակարարումը ներկայացված ապրանքի նմուշները համաձայնեցնել պատվիրատուի հետ: Մատակարարման օրը համաձայնեցնել պատվիրատուի հետ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

ГЕНРИ-ШИН ООО в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՀՀԿԳՄՍՆԷԱՃԱՊՁԲ-24/79 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар |
|---|---|
| | технические характеристики |
| 8 | |